

Տեղեկատվություն
Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2012 թվականի միջոցառումների
ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին

	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսական ապահովումը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն			
1.	ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների աշխատանքների կանոնակարգում:	ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գենդերային պետական քաղաքականության իրականացման, ՀՀ-ում գենդերային քաղաքականությանն ուղղված ծրագրերի իրագործմանը նպաստելու նպատակով մշակվել է ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի օրինակելի կանոնադրությունը>>, որը հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի թիվ 51-Ա/1 և ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2012 թվականի հունիսի 18-ի թիվ 78-Ա համատեղ հրամանով:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Հանրապետությունում գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում:	Համաշխարհային Բանկի աջակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ իրականացվել է «Կայուն զարգացման ծրագրի մշտադիտարկման գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ»>> ծրագիրը: Ուսումնասիրվել է գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկմանն ուղղված միջազգային փորձը, մշակվել են գենդերային ցուցիչներ սոցիալական, տնտեսական, առողջապահության, գիտության և կրթության, գյուղատնտեսության ոլորտներում: Մշակված ցուցիչները, լինելով ունիվերսալ, հնարավորություն կտան գնահատել ոչ միայն կոնկրետ ծրագրեր, այլև իրականացնել գենդերային վերլուծություններ տարբեր ոլորտներում: Ծրագրի շրջանակներում մշակվել է նաև "Գենդերային զգայուն և	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

		տարաբաժանված ցուցիչներ" մեթոդական ձեռնարկը, որը հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 93 - Ա/1 հրամանով:	
3.	Պետական ծառայողների որակավորման բարձրացում, ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը:	Տարվա ընթացքում իրականացվել են «Գենդերային հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում վերապատրաստվել են բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոններ զբաղեցնող 95 քաղաքացիական ծառայողներ, որից 26-ը՝ գլխավոր և բարձրագույն, իսկ 69-ը՝ առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող:	ՀՀ պետական բյուջե
ՀՀ մշակույթի նախարարություն			
4.	«Կին միջազգային կինոփառատոն»	9-րդ միջազգային կինոփառատոնի ընթացքում ցուցադրվել են 69 կին ռեժիսորների ֆիլմեր, ավելի քան 25 երկրներից:	ՀՀ պետական բյուջե
5.	«Երկնքից երեք խնձոր ընկավ...» հեքիաթասացության և բարբառի մրցույթ-փառատոնի կազմակերպում:	Փառատոնն ունի հանրապետական ձևաչափ: 1-ին փուլը իրականացվել է ՀՀ մարզերում: 2-րդ փուլը անցկացվել է Երևանի Հովի. Թումանյանի թանգարանում: Փառատոնին մասնակցել են մարզային փուլում հաղթած տարածաշրջանային տարբեր բարբառների տիրապետող շուրջ 28 բանասացներ:	ՀՀ պետական բյուջե
ՀՀ կրթության և գիտության նախարարություն			
6.	Հանրակրթական դպրոցի տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևա-	Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ թեմատիկ նյութերը ներառվել են տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների, ինչպես նաև «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում: Մշակվել է «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով ներդիրը, որը կներառվի առարկայական ուսուցիչների, ինչպես նաև հանրակրթական դպրոցի տնօրենների և փոխտնօրենների	ՀՀ պետական բյուջե

	<p>վորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը:</p>	<p>վերապատրաստման մոդուլում: Միաժամանակ «Վստահություն» սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը առանձին թիրախային խմբերի համար կազմակերպել է ուսուցողական միջոցառումներ, որտեղ քննարկվել են նաև գենդերային հիմնախնդիրներին վերաբերող թեմաներ: Այդ դասընթացներին մասնակցել են ընդհանուր թվով 56 մանկավարժներ, փոխտնօրեններ և տնօրեններ, ինչպես նաև 27 ապագա մանկավարժներ:</p>	
<p>7.</p>	<p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և դասավանդողների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը:</p>	<p>Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ ուսումնական հաստատությունների 920 դասավանդողների և արտադրական ուսուցման վարպետների համար՝ 41 խմբով: Դասընթացի ծրագրում ներառվել են նաև թեմաներ ՄԿՈՒ ոլորտում առկա գենդերային խնդիրների վերաբերյալ: Գենդերային գիտելիքների իրազեկվածության բարձրացման նպատակով նախատեսվում է վերապատրաստման ծրագրում ներառել «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով ներդիրը:</p>	<p>«Վստահություն»</p>
<p>8.</p>	<p>Սովորողների մոտ մասնագիտական կողմնորոշման հարցերում իրազեկվածության բարձրացում՝ ուղղված գենդերային կարճատև հարթակների հաղթահարմանը, աղջիկների և</p>	<p>«Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկը ներդրվել է հիմնական դպրոցում, և կիրառվում է դասղեկների կողմից՝ դասղեկական ժամերի ընթացքում, սովորողները իրազեկվում են մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ: Քոլեջների ուսանողների հետ տարվել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ՝ նպաստելով տարբեր</p>	<p>«Վստահություն»</p>

	<p>տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը:</p>	<p>մասնագիտությունների մասին նրանց իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև իրականացվել են տարբեր թեմաներով ոչ ֆորմալ ուսուցման դասընթացներ՝ ուղղված աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն ու հմտությունների զարգացմանը:</p> <p>Միաժամանակ 2012 թվականին կազմակերպվել է կարիերայի տոնավաճառ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնակցությամբ, որտեղ և հանրակրթական դպրոցների սովորողները և հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ծանաթանալու ՄԿՈւ հաստատությունների կրթական ծրագրերին:</p>	
<p>9.</p>	<p>Ուսումնամեթոդական գրականության գենդերային փորձաքննության իրականացում:</p>	<p>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ փորձագիտական խմբի կողմից իրականացվել է տարրական դպրոցի՝ «Այբբենարան», «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը», «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաների հիմնական և այլընտրանքային դասագրքերի գենդերային փորձաքննություն: Փորձագետների կողմից մշակվել են գենդերային փորձաքննության չափանիշներ, որոնց կիրարկման արդյունքում վեր են հանվել նշված դասագրքերում առկա գենդերային կարծրատիպեր պարունակող նյութերը: Փորձագետների կողմից ներկայացվել է համապատասխան առաջարկությունների փաթեթ:</p>	<p>«Վ պետական բյուջե»</p>
<p>10.</p>	<p>Գենդերային հիմնախնդիրների ներառում ՄԿՈՒ պետական քաղաքականության մեջ:</p>	<p>ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում 2012 թվականի ընթացքում անցկացվել է հետազոտություն՝ «Նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի 2010-2011թթ. շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության մասին», որի նպատակն էր ուսումնասիրել ոլորտի արդյունավետությունը, շրջանավարտների աշխատանքով ապահովվածությունը, շրջանավարտների ձեռք</p>	<p>«Վ պետական բյուջե»</p>

		<p>բերած հմտությունների ու կարողությունների համապատասխանությունը գործատուի կողմից ներկայացվող պահանջներին: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՄԿՈՒ ոլորտի սովորողների ուսման և աշխատանքի համատեղմանը, սովորողների աշխատանքային փորձին (նախքան ուսումնական հաստատություն ընդունվելը), շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորություններին, ինչպես նաև նրանց կողմից աշխատանք փնտրելու տևողություններին վերաբերող հարցեր և այլն: Նշված հարցերի առնչությամբ ցուցանիշները հաշվարկվել են նաև գենդերային կտրվածքով, և որոշ դեպքերում առավել լավ ցուցանիշներ գրանցել են տղաները: Նշված հետազոտությունը կօգնի ՄԿՈՒ ոլորտում քաղաքականության, գործող մասնագիտությունների և որակավորումների վերանայմանը, ինչպես նաև գործատու-ուսանող կապերի նոր ուղղությունների սահմանմանը:</p>	
--	--	--	--

«Հ գյուղատնտեսության նախարարություն»

<p>11.</p>	<p>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի իրականացում:</p>	<p>Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզի՝ Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Սյունիք, Շիրակ և Տավուշ, 54 համայնքում ստեղծված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների 4265 անդամների ավելի քան 23 %-ը կանայք են:</p> <p>Կոոպերատիվների 1001 կին անդամների համար իրականացվել է 66 ուսուցում՝ կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների, կոոպերատիվի բյուջեի կազմման, արոտօգտագործման, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման, դեգրադացիայի դեմ պայքարի, արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով:</p> <p>Նշված միջոցառումը կնպաստի կանանց համար լրացուցիչ</p>	<p>Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ</p>
------------	---	---	---

		<p>աշխատատեղերի ստեղծմանը, աշխատանքի պայմանների բարելավմանը, կոոպերացիայի սկզբունքների համաձայն համատեղ գործունեության կազմակերպման մասին իրազեկվածության բարձրացմանը, անասնապահական արտադրանքի արտադրության ծավալների ավելացմանը, կանանց եկամուտների աճին: Նշված վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել է 24 մրցակցային դրամաշնորհային ծրագիր, որից 3-ը՝ կանանց ղեկավարությամբ: Մյուս ծրագրերում կանայք ունեցել են ակտիվ մասնակցություն:</p> <p>Կանանց ղեկավարությամբ իրականացված ծրագրերն են.</p> <ol style="list-style-type: none">1. «Հայկական կիսակոպտաբուրդ ցեղատեսակի ոչխարների հոտում արտադրական գործընթացների նոր օպտիմալ տեխնոլոգիաների կիրառմամբ և լիարժեք կերակրմամբ սերնդի, մսի, կաթի և բրդի արտադրության ավելացում» (ՀՀ Արմավիրի մարզ, Դալարիկ համայնք, 5 անդամից բաղկացած կանանց ֆերմերային խումբ):2. «Երկշերտ պոլիէթիլենային ջերմատան կառուցում և նոր տեխնոլոգիաներով ելակի մշակության կազմակերպում ՀՀ Վայոց Ձորի մարզում» (ՀՀ Վայոց Ձորի մարզ, Աղավնաձոր համայնք, 5 անդամից բաղկացած ֆերմերային խումբ, որոնցից 3-ը կանայք են):3. «Բանջարեղենի ոչ ավանդական տեսակների (Կոլրաբի, Բրոկկոլի, Բոյուսեյան կաղամբ) նոր տեսակի մշակության կազմակերպում, ներդրում և պահպանում նոր տեխնոլոգիայով (խորը սառեցման) ՀՀ Լոռու մարզի Գարգառ համայնքի պայմաններում» (ՀՀ Լոռու մարզ, Գարգառ համայնք, 5 անդամից բաղկացած ֆերմերային խումբ, որոնցից 4-ը կանայք են): <p>Տեխնոլոգիաների փոխանցման նպատակով վերը նշված ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է 3 դաշտային օր, 3 հեռուստահաղորդում, 5 սեմինար, որոնց ընթացքում տպագրվել և ֆերմերներին են բաժանվել 250 տեղեկատվական</p>	
--	--	---	--

		<p>թերթիկներ:</p> <p>Նշված աշխատանքները կնպաստեն նոր տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանն ու առաջավոր փորձի տարածմանը:</p>	
12.	<p>Գյուղական բնակավայրերում կանանց աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի իրականացում, մասնավորապես՝ մատչելի պայմաններով գյուղատնտեսական վարկերի տրամադրման ծրագրերի իրականացում:</p>	<p>ՀՀ կառավարության 31.03.2011թ. N349-Ն որոշմամբ հաստատված՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին համապատասխան՝ 2012 թվականին շարունակվել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար հանրապետության առևտրային բանկերի կողմից արտոնյալ վարկերի տրամադրման գործընթացը:</p> <p>Տարվա ընթացքում հանրապետության բոլոր համայնքներում տրամադրվել է շուրջ 17 հազ. միավոր վարկ՝ 14.76 մլրդ դրամ գումարով, որից շուրջ 17 տոկոսը բաժին է ընկնում կանանց:</p> <p>Արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը կխթանի կանանց ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, եկամուտների ավելացմանը, աղքատության նվազեցմանը և ի վերջո կհանգեցնի գյուղի կանանց ակտիվության բարձրացմանն ու կենսապայմանների բարելավմանը:</p>	ՀՀ պետական բյուջե
ՀՀ առողջապահության նախարարություն			
13.	<p>Սեռով պայմանավորված ընտրովի աբորտների կանխարգելմանն ուղղված համապատասխան միջոցառումների մշակում և իրականացում:</p>	<p>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում սեռով պայմանավորված աբորտների վերաբերյալ 2011թվականին իրականացված ընտրովի հետազոտության արդյունքները ամփոփվել և հրատարակվել են հայերեն և անգլերեն լեզուներով:</p> <p>Զանգվածային լրատվամիջոցներով (Ար, Հ1-“Ազատ գոտի”, Արմենիա - “Կենդանի մատյան”, Կենտրոն ԱՐ “Հատուկ թղթակից” հանրային հեռուստատեսության ալիքներով),</p>	<p>Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ</p>

		Ազատություն ռադիոկայանով, իրականացվել են ընտրովի արքրտների հիմնախնդրին վերաբերող հաղորդումներ:	
14.	Կանանց վերարտադրողական առողջության բարելավում, ծննդօգնության հաստատությունների աշխատանքի սկզբունքների կանոնակարգում:	Մշակվել են և ՀՀ առողջապահության նախարարի 24.01.2012թ.թիվ 103-Ա հրամանով հաստատվել են «Արտահիվանդանոցային ամբուլատոր-պոլիկլինիկական մանկաբարձագինեկոլոգիական օգնության կազմակերպման հիմնական սկզբունքներ», ուր ներառվել են բժշկական կազմակերպությունների աշխատանքի սկզբունքները, նկարագրերը:	Ֆինանսավորում չի պահանջվել
15.	Երեխաների անհետաձգելի բուժօգնության ծառայությունների հասանելիության և մատչելիության բարելավում՝ մարզային նշանակության մանկական վերակենդանացման ծառայությունների հզորացման միջոցով:	Ստեղծվել են միջմարզային նշանակության մանկական վերակենդանացման 2 նոր բաժանմունք (Կապանի ԲԿ-ում և Վանաձորի «Նարեկ» մանկական հիվանդանոցում), հզորացվել է Գյումրու մանկական Ավստրիական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքը:	ՀՀ պետական բյուջե

<p>16.</p>	<p>Նպաստել առողջ ապրելակերպի ու անվտանգ սեռական վարքագծի ձևավորմանը:</p>	<p>ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի կողմից 2012թ. վերանայվել և լրամշակվել է «Ծխախոտի օգտագործումը դադարեցնելուն ուղղված խորհրդատվության և բուժման» ուղեցույցը:</p> <p>Ծխախոտի դեմ պայքարի վերաբերյալ կազմակերպվել և հեռարձակվել են տեսանյութեր և հարցազրույցներ՝ «Հ1», «Արմենիա», «Շանթ», «Կենտրոն», «Երկիր Մեդիա», «Արմնյուզ», «Երևան» հեռուստաալիքներով:</p> <p>Ծխախոտի դեմ պայքարի միջազգային (մայիսի 31-ի) և ազգային (հոկտեմբերի 12-ի) օրերի հետ կապված անցկացվել են մամուլի ասուլիսներ, տպագրվել են հոդվածներ՝ «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Նովոյե Վրեմյա» թերթերում, տեղադրվել են տեղեկատվական նյութեր էլեկտրոնային մամուլում:</p> <p>ԱՄՆ ՄԶԳ Առողջապահական համակարգի հզորացում (HS-STAR)» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են. ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի առողջապահական հասարակական կազմակերպու թյունների ներկայացուցիչների համար «Վարքագծի փոփոխության հաղորդակցում, մեթոդաբանությունն ու կիրառումը ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում» թեմայով դասընթաց: Նշված մարզերի ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության մարզային փորձագիտական կենտրոններում ստեղծվել են հանրային կրթության ռեսուրս-կենտրոններ, որոնք իրականացնում են բնակչության նպատակային խմբերի առողջ ապրելակերպի քարոզչություն և բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում, մշակվել են նաև առողջ սննդի և ֆիզիկական ակտիվության բարձրացմանն ուղղված ուղերձներ, որոնք տարածվում են «Մոսկվիչկա» սուպերմարկետների ցանցում, լրագրողների համար կազմակերպվել և իրականացվել է սեմինար-դասընթաց ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, դրանց ռիսկի գործոնների, մասնավորապես՝</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
------------	--	--	-----------------------------------

		<p>Ֆիզիկական ակտիվության, առողջ սննդի օգտագործման, ծխելու վնասակարության վերաբերյալ:</p> <p>ՀՀ-ում արձանագրված վարակիչ հիվանդությունների օջախներում ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության մասնագետների կողմից իրականացվել են առողջ ապրելակերպի, վարակիչ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ քարոզչական աշխատանքներ, զրույցներ:</p> <p>2012թ. ապրիլի 19-ին կառավարության թիվ 15 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բռնկումների (համաճարակների), քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում բնակչության (առանձին խմբերի) իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության կարգը և միջոցառումների ծրագիրը»:</p> <p>ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. ապրիլի 5-ի N 716-Ա հրամանով՝ «Իմունիզացիայի Եվրոպական շաբաթ» նախաձեռնության շրջանակներում իրականացվել են իմունականխարգելման հարցերով հանրային իրազեկման միջոցառումներ՝ մի շարք հեռուստատեսային ակտիվներով՝ ա. հեռուստահաղորդումներ/«Բժիշկ Դավիթ Պետրոսյանի մոտ» հաղորդաշարով՝ ապրիլի 25-ին, «Ապրիլ առողջ» հաղորդաշարով՝ ապրիլի 23-ին, «Մի վնասիր» հաղորդաշարով՝ ապրիլի 23-ին/, բ. ստեղծվել է Facebook սոցիալական ցանցում իմունականխարգելման հարցերով էջ և ակտիվ հանրային իրազեկման ուղերձներ են տարածվել, գ. կազմակերպվել է լրագրողների համար կլոր սեղան, դ. Արմենիա հեռուստաընկերության «Կենդանի մատյան» հաղորդաշարով կազմակերպվել է քննարկում թափառող կենդանիների վնասակար ազդեցության վերաբերյալ:</p> <p>2012թ. ապրիլին մշակվել և Արարատի, Արմավիրի մարզերի բնակչության շրջանում տարածելու նպատակով նշված մարզերի</p>	
--	--	--	--

		<p>ՊՈԱԿ-ներին է տրամադրվել մալարիայի վերաբերյալ հուշաթերթիկ:</p> <p>ՀՀ ԱՆ Հանրային առողջության բաժին են ներկայացվել առաջարկություններ՝ 2012 թվականին զանգվածային լրատվամիջոցներով վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերի շուրջ հանդես գալու համար, որը իրականացվում է համաձայն ժամանակացույցի:</p> <p>Տպագրվել և բնակչությանն են բաժանվել վարակիչ կառավարելի և ոչ կառավարելի հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ հուշաթերթեր:</p> <p>Գրիպի կանխարգելման և ռոտավիրուսային պատվաստումների ներդրման ուղղությամբ բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով լրատվամիջոցներով կազմակերպվել են հաղորդումներ, հարցազրույցներ՝ «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններով, լրագրողների իրազեկման 2-օրյա դասընթաց, որի արդյունքում ինտերնետային կայք էջերում և թերթերում եղել են ավելի քան 20 հրապարակում:</p> <p>Նշված ժամանակահատվածում մամլո ասուլիս և հաղորդաշար է կազմակերպվել Նուբարաշենի գերեզմանոցի խնդիրների վերաբերյալ:</p> <p>ՀՀ ԱՆ մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոնի կողմից անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ տեղեկատվության բարձրացման նպատակով կազմակերպվել և հեռարձակվել են հեռուստահաղորդումներ առաջատար հեռուստաալիքներով 8 անգամ, մարմնավաճառների, համասեռամուլների, երիտասարդների շրջանում կազմակերպվել և իրականացվել են դասախոսություններ 48 անգամ, 3 տեղեկատվական նյութի տպագրություն և բաշխում, կլոր սեղանի քննարկումներ 6 անգամ:</p>	
17.	Նվազեցնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ	ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ	Օրենքով չարգելված

<p>վարակի տարածումը, մարդկանց իրազեկման և գիտելիքների բարձրացման միջոցով:</p>	<p>Նկարահանվել և «Զվարթնոց» օդանավակայանի սրահներում ցուցադրվել է միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելմանը նվիրված տեսահոլովակ, որի գովազդային տարբերակը տեղադրվել է Երևանի քաղաքային 3 (թիվ 30, թիվ 23, թիվ 17Ա երթուղիներ) և միջքաղաքային 2 (Երևան-Աբովյան, թիվ 261 երթուղի) ավտոբուսների վրա:</p> <p>ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ մշակվել և տպագրվել է ՄԻԱՎ վարակի հիմնահարցերի (ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիներ, կանխարգելման միջոցներ), ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության նշանակության մասին բուկլետ փախստականների համար, որը թարգմանվել է նաև ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն:</p> <p>«Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից իրականացվող «Հարավային Կովկասի երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ու ազդեցության նվազեցմանն ուղղված երկրների համագործակցություն» ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել են ՄԻԱՎ վարակի հիմնահարցերի (ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիներ, կանխարգելման միջոցներ), ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության նշանակության մասին բուկլետներ միգրանտների համար:</p> <p>Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից երիտասարդների շրջանում իրականացվող «Կողմնորոշվելու ժամանակն է» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «ԶԻԱՀ. գիտեմ, մտահոգ եմ, գործում եմ» խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես-մրցույթ, անցկացվել են «Սպորտն ընդդեմ ՁԻԱՀ-ի» խորագրով բասկետբոլի դպրոցական թիմերի հանրապետական մրցույթ, «Երաժշտությունն ընդդեմ ՁԻԱՀ-ի» խորագրով համերգներ՝ հեղինակ-կատարողների և հայտնի երաժիշտ կատարողների մասնակցությամբ, ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրվա</p>	<p>այլ ֆինանսավորման աղբյուրներ</p>
---	---	-------------------------------------

	<p>շրջանակներում կազմակերպվել է դասական երաժշտության համերգ և մոմավառություն: Բոլոր միջոցառումների ընթացքում տրամադրվել է տեղեկատվություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի վերաբերյալ: Տարվա ընթացքում նույն ընկերության «SMS տեղեկատվական գիծ» ծրագրի կամավորները պատասխանել են Orange և VivaCell բջջային հեռախոսացանցերի բաժանորդների ՄԻԱՎ վարակին առնչվող 2 հարցերին: Նկարահանվել և հեռարձակվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելմանը նվիրված տեսահոլովակ:</p> <p>Չանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար անցկացվել է «Չանգվածային լրատվամիջոցների դերը ՄԻԱՎ վարակի կանխարգելման գործում» թեմայով սեմինար-վարժանք, որի նպատակը հայաստանյան ՁԼՄ-ներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրների լուսաբանման որակի բարելավումն էր՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի վերաբերյալ լրագրողների իրազեկության բարձրացման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող թեմաներին անդրադառնալու համար շարժառիթի ձևավորման, դրանց լուսաբանման և տեղեկատվական աղբյուրների հետ աշխատելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորման միջոցով:</p> <p>«Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից իրականացվող «Համատեղ ջանքերով ՄԻԱՎ-ի կանխարգելում Հարավային Կովկասի երկրներում» ծրագրի շրջանակներում մշակվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների վերաբերյալ համակարգչային խաղ դեռահասների համար:</p> <p>ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում ՁԻԱՀ-ի ջատագովության խմբի կողմից («Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք», «Իրական աշխարհ, իրական մարդիկ», «Կանանց ռեսուրսային կենտրոն» և «Դրական մարդկանց հայկական ցանց» ՀԿ-ներ) կազմակերպվել է «Աստղերն ընդդեմ ՁԻԱՀ-ի» խորագրով միջոցառում:</p>	
--	--	--

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տնօրենը, բժիշկները մասնակցել են մի շարք ռադիո- և հեռուստահաղորդումների («Կենդանի մատյան», Արմենիա, «Մանրամասներ» Արմնյուս, «Դարի գիշեր», Դար 21, «Սկսենք նորից» և «Հայկական ուրբաթ», Կենտրոն, «22-րդ դար», Երևան, «Ազդարար» և «Հատուկ թղթակից», ԱՐ, «Վեկտոր», Գավառ, «Հարցազրույց կարևորի մասին կամ փոքրիկ զրույց մեծ հարցերի մասին», ArmRadio), մամլո ասուլիսների, տվել են հարցազրույցներ, որոնց ընթացքում խոսել են նաև ՄԻԱՎ վարակի փոխանցման ուղիների, կանխարգելման միջոցների, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի անհրաժեշտության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում տրամադրվող ծառայությունների մասին:

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա նախօրյակին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից Գյումրիում ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա նախօրյակին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից Գյումրիում կազմակերպվել է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների և թմրամոլության կանխարգելում» թեմայով սեմինար-վարժանք երիտասարդների, Շիրակի մարզի զբաղվածության կենտրոնների և ՀԿ-ների ներկայացուցիչների համար:

Անցկացվել են «ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռավարակներ, ՏԲ» թեմայով սեմինար-վարժանքներ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի և ՀԿ-ների ներկայացուցիչների, փախստականների համար:

Անցկացվել են «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը և աշխատանքային միգրացիան» թեմայով սեմինար-վարժանքներ Երևանի զբաղվածության պետական ծառայության, միգրացիոն ռեսուրս կենտրոնի, Գավառի և Սևանի զբաղվածության կենտրոնների, ՀԿ-ների ներկայացուցիչների համար:

		Նշված բոլոր միջոցառումների կազմակերպման և անցկացման գործում մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն են ցուցաբերել ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի մասնագետները:	
18.	Ապահովել աջակցություն կանանց և տղամարդկանց առողջության պահպանման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին:	<p>«Կանանց ռեսուրսային կենտրոն» և «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություններին տրամադրվել է բազմակողմանի աջակցություն կանանց հիմնախնդիրների կապակցությամբ բարձրացված հարցերի շուրջը:</p> <p>Մարզերի կանանց հիմնախնդիրներով զբաղվող 20 հասարակական կազմակերպությունների և լրագրողների համար Ձինիշյան հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում դեկտեմբեր ամսին Ծաղկաձորում կազմակերպվել է 2-օրյա սեմինար՝ նվիրված կանանց վերարտադրողական առողջության հիմնախնդիրներին:</p> <p>ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի մասնագետները մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն են ցուցաբերել հետևյալ հասարակական կազմակերպություններին՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Իրական աշխարհ, իրական մարդիկ 2. Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք 3. Կանանց ռեսուրսային կենտրոն 4. Դրական մարդկանց հայկական ցանց 5. Վորլդ Վիժն Հայաստան 6. Հայկական կարմիր խաչի ընկերություն 	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն			
19.	Արտակարգ իրավիճակներում գենդերային խնդիրների վերհանման	Ուսումնասիրվել է արտակարգ իրավիճակներում գենդերային խնդիրների վերաբերյալ ԵՄ անդամ երկրների փորձը՝ գործնական միջոցառումների մշակման փուլում կիրառման	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

	ուղղված աշխատանքների իրականացում:	նպատակով:	
20.	Արտակարգ իրավիճակներից կանանց խոցելիության հաշվառման, վերլուծության և գնահատման իրականացում:	Մասնակցություն <<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի գենդերային թեմատիկ խմբի աշխատանքներին: Մշակվել և հաստատվել է արտակարգ իրավիճակներում կանանց խոցելիության հաշվառման ձևաչափը: Կանոնակարգվել է << մարզերից արտակարգ իրավիճակներից, դեպքերից, պատահարներից կանանց խոցված լինելու վերաբերյալ համապատասխան վիճակագրական տվյալների ստացման, վերլուծման և գնահատման գործընթացը:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
21.	Արտակարգ իրավիճակներում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության տարածում:	Գենդերային քաղաքականության 2012 թ. միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակներում 2012 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում տպագրվել է գենդերային ուղղվածության 5 հոդված, հեռուստատեսային տարբեր հաղորդումներով և ինտերնետային կայքերում կազմակերպվել են բազմաթիվ հարցազրույցներ կին փրկարարների հետ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
22.	Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվական ակցիաների անցկացում:	<<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի շրջանակներում 2 անգամ կազմակերպվել է թեմատիկ կլոր սեղան:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
<< Էկոնոմիկայի նախարարություն			
23.	«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի իրականացում:	<<Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն>> ծրագրի շրջանակում 38 կին գործարար ներգրավված են եղել 7 սկսնակ ձեռներեցության աջակցության դասընթացներում, որոնք ունեցել են 3 հիմնական բովանդակային ուղղություններ՝ Գործարարության հիմունքներ ՝ ներառվել են Գործարարության բնույթը, Ձեռներեցի անձնական և գործարար հատկանիշները, Գործարար գաղափարը և նրա վերլուծությունը,	<< պետական բյուջե

		կազմակերպությունների կազմակերպահրավական տեսակները և գրանցումը, ՀՀ հարկային դաշտը թեմաները: Գործարար ծրագիր՝ ներառվել են գործարար ծրագրի էությունն ու բաժինները, մարքեթինգային ծրագիր, արտադրական ծրագիր, կառավարման ծրագիր, ֆինանսական ծրագիր թեմաները: Գործարար ծրագրերի ներկայացում	
24.	«ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի իրականացում:	«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4070 կին գործարարի:	ՀՀ պետական բյուջե
25.	Արդյունաբերական ոլորտներում (հատկապես թեթև արդյունաբերության) կանանց համար նոր աշխատատեղերի ստեղծում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարության և մասնավոր հատվածի համագործակցության արդյունքում՝ հարկային արտոնություններ են տրամադրվել հանրապետության մի շարք կազմակերպությունների, որոնք, 2012 թվականին իրականացնելով ներդրումային ծրագրեր, գործարկել են նոր արտադրություններ (կամ ընդլայնել են) և ստեղծել նոր աշխատատեղեր: Կանանց համար ստեղծված նոր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը դեռևս լիարժեք ամփոփված չէ: Սակայն ներկա դրությամբ կանանց համար նոր ստեղծված աշխատատեղերի շարքում կարելի է նշել «Բրատեքս բրենդիդ տեքստիլ մանուֆակտուրինգ» ընկերություն՝ 65, «Եվրոթերմ» ՓԲԸ՝ 10, «Էկոտոմատո» ՓԲԸ՝ 10, «Յուրոն» ՍՊԸ՝ 32, «Գոլդեն Գրեյս Արմաս»՝ 30 աշխատատեղ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
ՀՀ Կոտայքի մարզպետարան			
26.	Մարզում գենդերային նպատակային ծրագրերի և գենդերային հիմնախնդիրների լուսաբանման	Մարզի <<Լուսալիք>> հեռուստաընկերության հետ համատեղ մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը նախապատրաստել է գենդերային քաղաքականությանը վերաբերող թողարկումներ:	ֆինանսավորում չի պահանջվել

	<p>ուղղված աշխատանքների իրականացում:</p>	<p>Արդյունքում ապահովվել է հասարակության տեղեկացվածությունը պետական գենդերային քաղաքականության, գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի վերաբերյալ: Ոլորտի փորձագետների մասնակցությամբ հեռարձակվել են թողարկումներ, նվիրված գենդերային բռնությունների կանխարգելման խնդիրներին: Հաղորդումների ընթացքում ներկայացվել է տեղեկատվություն բռնությունների առաջացման պատճառների և երևույթի դեմ պայքարի մասին:</p>	
<p>27.</p>	<p>ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի և գենդերային քաղաքականության 2012թ. միջոցառումների ծրագրի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում:</p>	<p>Մարզպետի կողմից անցկացվող տարածքային խորհրդակցությունների ժամանակ /23-24.02.2012թ./ Հրազդանի, Նաիրիի և Կոտայքի տարածաշրջանների մասնակից համայնքների ղեկավարների քննարկմանն է ներկայացվել ԸԿԵԻՊ բաժնի աշխատանքային ծրագրով նախատեսված ՀՀ գենդերային քաղաքականության 2012թ. միջոցառումների ծրագիրը: Քննարկման արդյունքում առաջարկվել է ԸԿԵԻՊ բաժնի մասնագետների և համայնքների ղեկավարների աշխատակազմերի մասնակցությամբ համայնքների տարածքներում գործող հաստատություններում (դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, հիմնարկ, ձեռնարկություններ) անցկացնել իրազեկման աշխատանքներ՝ ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական և 2012թ. աշխատանքային ծրագրերը ներկայացնելու, տեղերում գենդերային հիմնահարցերը բարձրաձայնելու, առաջիկա տեղական ինքնակառավարման մարմինների և ԱԺ ընտրություններին կանանց ներկայացվածությունը Խորհրդարանում և տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովելու նպատակով:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>28.</p>	<p>Մշակութային և կրթական հաստատությունների աշխատողներին գենդերային գիտելիքների</p>	<p>Սեպտեմբերի 27-ին Աբովյանի Զարե Սահակյանի անվան երաժշտական դպրոցում մարզի մշակութային հաստատությունների աշխատողների համար կազմակերպվել է զեկուցում՝ «Հայ ազգային մտակերտվածքը, ընդունված</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	<p>հաղորդման և նրանց գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:</p>	<p>գենդերային կարծրատիպերը և գենդերային բռնության հանդեպ հասարակության վերաբերմունքը նոր արժեքների ներթափանցման և գլոբալացման պայմաններում>> թեմայով: Միջոցառման նախաձեռնողը մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունն էր, իսկ որպես համակատարող հանդես է եկել նույն աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժինը: Մտքերի փոխանակության ժամանակ մասնակիցները ստացել են տեսական գիտելիքներ և խորհրդատվական աջակցություն:</p>	
<p>29.</p>	<p>Զբաղվածության ոլորտում գենդերային հիմնախնդիրների լուսաբանմանն ուղղված աշխատանքների իրականացում:</p>	<p>Խնդիրը լուսաբանելու նպատակով կազմակերպվել է սեմինար <<Գենդերային խտրականությունը զբաղվածության ոլորտում և աշխատանքի շուկայում>> թեմայով, որին մասնակցել են զբաղվածության կենտրոնների մասնագետներ: Զբաղվածության մարզային կենտրոնների ուժերով 2012թ. հունիսի 28-ին կազմակերպվել է աշխատանքային տոնավաճառ Հրազդան քաղաքում, որի արդյունքում աշխատանքի տեղավորված 42 աշխատանք փնտրողներից 34-ը կանայք են եղել: Հրազդանի ԶՄԿ-ի զբաղվածության պետական ծրագրերում՝ մասնավորապես մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվել են 87 գործազուրկներ (78-ը կանայք), աշխատանքի են տեղավորվել 39-ը:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
